

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝
24.09.2021թ. նիստի N 1 արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ

1. Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
2. Ֆակուլտետի գիտխորհրդի 2021-2022 ուս.տարվա աշխատանքային պլանի հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստին ներկա էին 36 անդամներից 30-ը : Գ.Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և շնորհավորեց գիտխորհրդի նորանշանակ անդամներին : Նա ներկայացրեց գիտխորհրդի նոր կազմը՝ ուսխորհրդի նորանշանակ նախագահ Գոհար Հարությունյանին և մյուս ուսանողներին : Դեկանը նշեց, որ ուսխորհրդի կազմը ամբողջովին փոխվել է երկու հիմնական պատճառներով՝ ուսանողների մի մասը ավարտել է ուսուցումը, մյուս մասը գտնվում է արտերկրում՝ կրթությունը շարունակելու : Նա ներկայացրեց նաև նորանշանակ փոխդեկան Մ.Յաղուբյանին, ով ընտրվել է նախկին փոխդեկան Գ.Գրիգորյանի փոխարեն/ ով իր դիմումի համաձայն դադարեցրել է իր պաշտոնի լիազորությունները/ :Գ.Բարսեղյանի խոսքով մի արժանի թեկնածուին եկել է փոխարինելու մյուս ոչ պակաս արժանավորը : Իր դիմումի համաձայն արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆեսոր Հ.Էդոյանը նույնպես դուրս է եկել գիտխորհրդի կազմից, նրան փոխարինելու է նույն ամբիոնի բ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը : Գիտխորհրդի կազմը համալրվել է նաև ևս մեկ նոր թեկնածուով՝ միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի բ.գ.թ., դոցենտ Մ.Օհանյանի անդամակցությամբ՝ փոխդեկան Մ.Յաղուբյանի փոխարեն : Գ.Բարսեղյանը շնորհակալություն հայտնեց նախկին անդամներին իրենց կոմպետենտ և անբասիր աշխատանքի համար :

Գ.Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատմանը: Փոխդեկան բ.գ.թ.,դոցենտ Մ.Յաղուբյանը ներկայացրեց անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողներին : Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց առաջին կիսամյակում հետևյալ ուսանողներին առաջադրել անվանական կրթաթոշակի:

- Սկրոյան Մարիետա Սամվելի /Ֆրանս.բանասիր.4-րդ կուրս, Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ /:
- Մինասյան Սրբուհի Տիգրանի /անգլ.բանաս., մագիստրատուրա 2-րդ կուրս, Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ/:
- Դավթյան Դիանա Սասունիկի /վարչագործ. թարգմ.,մագիստրատուրա 2-րդ կուրս, Հ.Աճառյանի անվան կրթաթոշակ/

Դեկան Գ.Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ Ֆակուլտետի գիտխորհրդի 2021-2022 ուս.տարվա աշխատանքային պլանի հաստատմանը: Միաձայն քվեարկության արդյունքում հաստատվեց 2021-2022 ուս.տարվա աշխատանքային պլանը:

Այնուհետև անդրադարձ կատարվեց ընթացիկ հարցերին :Միաձայն քվեարկության արդյունքում որոշեցին.

- 1.Երաշխավորել թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Գուրգեն Անուշավանի Գևորգյանին պրոֆեսորի կոչման ներկայացնելու համար:
- 2. Դիմել ԵՊՀ գիտխորհրդին բ.գ.թ., դոցենտ Գուրգեն Անուշավանի Գևորգյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու համար:
- Հաստատել անգլիական բանասիրության առկա ասպիրանտ Զարա Հայրապետյանի՝ «Լեզուն որպես իրավական դիսկուրսի հասկացման բանալի» թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս.Ք. Գասպարյանին:
- Երաշխավորել ռոմանական բանասիրության ամբիոնի «Ծաղիկ թարգմանությանց» հանդեսը տպագրության :
- Դիմել ԵՊՀ ժ/պ ռեկտոր պրն.Հ.Հովհաննիսյանին ԵԼՀ ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնում գործող «Գործարար հաղորդակցման լեզվամշակույթ» մագիստրոսական ծրագրի երկրորդ կուրսի և նույն ամբիոնում «Գործարար հաղորդակցման լեզվամշակույթ» մագիստրոսական ծրագրի առաջին կուրսում դասավանդվող «Թվային հաղորդակցության հիմունքներ», «Գործարար անգլերենը միջմշակութային համատեքստում» առարկաների դասավանդման առցանց եղանակով անցնելու հարցի առնչությամբ համաձայնությունը ստանալու վերաբերյալ:

- Դիմել ԵՊՀ հիմնադրամի հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր Է. Ասրիյանին գերմանական բանասիրության ամբիոնում գործող «Միջմշակութային հաղորդակցություն /գերմաներեն/» մագիստրոսական ծրագրի դասախոսությունները անցկացնել առցանց եղանակով:
- Դիմել ԵՊՀ հիմնադրամի հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր Է. Ասրիյանին ֆրանսիական բանասիրության ամբիոնում գործող «Միջմշակութային հաղորդակցություն/ ֆրանսերեն» մագիստրոսական ծրագրի 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակի բոլոր մասնագիտական դասընթացները անցկացնել առցանց եղանակով:

ԵԼՀ ֆակուլտետի

ղեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝



Մ.Դալայան

24.09.2021թ.